# Նշանակվել են նոր տնօրեններ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի երեկվա նախագահության նիստում հաստատվեց 4 ՊՈԱԿ գիտահետազոտական կազմակերպությունների տնօրենների թեկնածությունները:

Ինչպես հայտնեցին *ՀՀ ԳԱԱ լրատվական ծառայությունից*, ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրենի պաշտոնում հաստատվեց Արամ Պապոյանը, ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում՝ Արսեն Հախումյանը, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնում՝ Արտակ Մկրտչյանը, ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանի տնօրենի պաշտոնում՝ Հայկ Հարությունյանը:

Հիշեցնենք, որ 65 տարին լրանալու կապակցությամբ՝ իրենց պաշտոններից ազատվել էին 23 տնօրեն: